ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2019/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էկոդեզ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Շ. Դավթյանի (լիազորագիր, տրված՝ 25.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6472-2019 գրությամբ «Էկոդեզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2019թ. թիվ ՊՆ/02/77-2019 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6472-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էկոդեզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էկոդեզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էկոդեզ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն), պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/07 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, որը հաստատվում է նաև Ընկերության՝ հարկ վճարողի անձնական քարտի քաղվածքով: Դրա հետ մեկտեղ Ընկերությունն ունի ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանք, որում երևում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրված ժամկետանց պարտավորությունը հանդիսանում է դրոշմանիշային վճար:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.05.2019թ. տրամադրված թիվ 1271 տեղեկանքը

3. ՀՀ պաշտպանության նախարարությանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.03.2019թ. թիվ ՊՆ/02/77-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացվեց առաջին տեղ զբաղեցրած «Էկոդեզ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեյից ստացված եզրակացության համաձայն, «Էկոդեզ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի

ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը /15 000 ՀՀ դրամ/ գերազանցող /29 000 ՀՀ դրամ/ ժամկետանց պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Էկոդեզ» ՍՊԸ-ի գնման հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/07 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 18.02.2019թ. հայտ է ներկայացրել «Էկոդեզ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էկոդեզ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 44-րդ կետի հիման վրա 07.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էկոդեզ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 29 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6472-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2019թ. թիվ ՊՆ/02/77-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Էկոդեզ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր արժեքը կազմել է 1 500 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի

հիման վրա 07.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 29 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էկոդեզ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Էկոդեզ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց

պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Ինչ վերաբերում է Ընկերության հայտնած այն դիրքորոշմանը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, որը հաստատվում է նաև Ընկերության՝ հարկ վճարողի անձնական քարտի քաղվածքով, իսկ 29 000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.05.2019թ. տրված թիվ 1271 տեղեկանքի, հանդիսացել է դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն, ապա հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ *ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում <u>2018թ. նոյեմբեր ամսից</u> տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝*

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Էկոդեզ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6472-2019 գրությամբ «Էկոդեզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էկոդեզ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**